ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԱՐԱՄ Ա ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսը (աշխարհական անվամբ՝ Պետրոս Քեշիշյան) ծնվել է 1947 թվականին Բեյրութում (Լիբանան): Նախնական կրթությունը ստացել է ազգային Մեսրոպյան վարժարանում, որից հետո ուսումնառությունը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում (1961 թ. հոկտեմբեր—1965 թ. մայիս): Այստեղ էլ 1965 թ. մայիսին ձեռնադրվում է սարկավագ՝ ձեռամբ Գարեգին եպս. Սարգսյանի (այժմ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց), իսկ 1968 թ. ձեռնադրվում է աբեղա՝ ձեռամբ Տաճատ արքեպս. Ուրֆալյանի:

1970 թ. ստանում է վարդապետական աստիճան՝ ձեռամբ Խորեն Ա Կաթողիկոսի՝ պաշտպանելով «Մամբրե Վերծանող՝ Ե դարի աստվածաբանը» վարդապետական թեզը: 1978 թ., երբ տակավին ուսանում էր Միացյալ Նահանգներում, Արամ վարդապետը ընտրվում է Լիբանանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, իսկ մեկ տարի անց միաձայն ընտրվում է Լիբանանի հայոց թեմի առաջնորդ: 1980 թ. մայիսին ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան և հաջորդ օրն իսկ ձեռնադրվում եպիսկոպոս՝ ձեռամբ Գարեգին Բ Աթոռակից Կաթողիկոսի: Արքության տիտղոս և պատիվ է ստանում 1985 թ. հունվարին:

Արամ Ա Կաթողիկոսը 1968—1978 թթ. անընդմեջաբար իր բարձրագույն ուսումն է շարունակում Մերձավոր Արևելքի Աստվածաբանական ճեմարանի, Ամերիկյան համալսարանի, Ճվեյցարիայի Բոսե Էքյումենիկ հաստատության, Օքսֆորդի համալսարանի արևելագիտության բաժնի և Նյու Յորքի Ֆորտհամ համալսարանում՝ ստանալով ակադեմիական հետևյալ վկայականները. Պսակավոր արվեստից, Մագիստրոս աստվածաբանության, Մագիստրոս Մերձավոր Արևելքի եկեղեցական պատմության և փիլիսոփայության դոկտոր:

Արամ Ա Կաթողիկոսը աբեղայական ձեռնադրությունից անմիջապես հետո իր հետևողական և գործուն մասնակցությունն է բերել միջեկեղեցական՝ էկումենիկ շարժմանը՝ թե՛ Մերձավոր արևելյան և թե՛ միջազգային համագումարներում՝ ներկայացնելով Կիլիկյան Աթոռը:

1974 թ. ընտրվում է Միջին Արևելքի Եկեղեցիների Խորհրդի Գործադիր Վարչության անդամ, իսկ 1977 թ. նշանակվում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ «Պրո Օրիենտե» կաթոլիկ էկումենիկ կազմակերպության մոտ և ապա ընտրվում նույն կազմակերպության պատվավոր անդամ: Արամ Ա Վեհափառը անդամ է նաև միջազգային մի շարք աստվածաբանական և էկումենիկ հանձնախմբերի և կազմակերպությունների, իսկ 1970 թվականից գործուն մասնակցություն է ունենում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի զանազան բաժանմունքների աշխատանքներին: Մնայուն անդամն է դառնում այդ Խորհրդի երիտասարդական բաժանմունքի, ապա՝ «Հավատ և կարգ» հանձնաժողովի և նրա գործադիր վարչության: 1983 թ. ընտրվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Վարչության անդամ՝ որպես ներկայացուցիչը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, իսկ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 1991 թ. Քեմպրայի (Ավստրալիա) համաժողովին ընտրվում է Կենտրոնական ու Գործադիր Վարչությունների ատենապետ՝ յոթ տարի ժամանակով:

Արամ Ա Կաթողիկոսը իր այս գործունեության բերումով դասախոսելով աշխարհի տարբեր համալսարաններում և միջեկեղեցական ժողովների ելույթներում ու պաշտոնական հանդիպումներում միշտ արծարծել է հայ ժողովրդի արդար պահանջատիրության և Արցախի հարցերը:

Արամ Ա Կաթողիկոսը նաև մի շարք գրական-աստվածաբանական հոդվածների և գրքերի հեղինակ է, որոնք հրատարկվել են նաև այլ լեզուներով:

ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

Հայաստանյայց Եկեղեցվո ճշմարիտ դիմագիծը, Բեյրութ, 1970 թ.:
Ներսես Շնորհալին աստվածաբան և էկյումենիստ, Բեյրութ, 1974 թ.
Վերականգնումի կամքով, Բեյրութ, 1983 թ.
Ժողովուրդին հետ, Բեյրութ, 1989 թ.
The Witness of the Armenian church in a Diaspora Situation, New York, 1978.
The Christian Witness at the Crossroads in the Middle East, Nicosia, 1980.
Conciliar Fellowship: a Common Goal, Geneva, 1990.
Orthodox Prespectives on Mission, Oxford, 1992.
Towards an Ecumenical Ethic for a Responsibile Society in a Sustainable Creation, Geneva, 1994.
Nerses the Gracious and Church Unity, New York (in process of publication).